ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Նախաբան

Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեության համար 2022 թվականի առաջին կիսամյակը բնականոն աշխատանքային շրջան էր:

Հայաստանի ԱՃԹՆ-ի 4-րդ ազգային զեկույցի համար մշակվել են համապատասխան տեխնիկական առաջադրանքի և զեկույցի ուսումնասիրության շրջանակի համար անհրաժեշտ ԲՇԽ-ի որոշումների նախագծերը, որոնք հաստատվել և ընդունվել են 2021թ. ապրիլի 27-ին անցկացված ԲՇԽ-ի նիստի ժամանակ:

2022թ. փետրվարին իրական շահառուների էլեկտրոնային համակարգով ամբողջությամբ էլեկտրոնային կարգով մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերությունները ներկայացրել են իրական շահառուների վերաբերյալ տարեկան հայտարարագրերը:

Կայացել է Օփեն Օուներշիփ և ԱՃԹՆ կազմակերպությունների կողմից համատեղ իրականացվող Opening Extractives ծրագրի հայաստանյան մեկնարկը և «Տվյալների ստուգման համակարգերի զարգացում» թեմայով անցկացված աշխատաժողովը:

ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և ազգային քարտուղարության ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցել են Հայաստանի հանքարդյունաբերության զարգացման ռազմավարության փաստաթղթի երկրորդ և երրորդ նախագծերի քննարկման, մեկնաբանման, ինչպես նաև վերջնական տարբերակի ներկայացման աշխատանքներին:

Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև ստորագրված «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագիրը գործարկելու համար ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից մրցութային կարգով ներգրավվել են դրամաշնորհային ծրագրի գնումների և ֆինանսների կառավարման փորձագետներ:

2022թ. աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքային միջոցառումների կատարման ընթացքի մասին ավելի մանրամասն ներկայացվում է ստորև: Աշխատանքների կատարումը նկարագրված է ըստ Աշխատանքային ծրագրում սահմանված նպատակների ներքո կատարված միջոցառումների բաշխման և առաջին կիսամյակի (Q1, Q2) համար սահմանված կատարման ժամկետների:

1. Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում

Միջոցառումներ 1-7

Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը և դրա բովանդակությունը հաշվետու ժամանակահատվածում ևս հանդիսացել է տեղեկատվության տարածման և դրա հասանելիության ապահովման հիմնական միջոցը: Կայքը պարբերաբար թարմացվել է, հրապարակվել և հանրությանը իրազեկվել են ոլորտին վերբերվող նոր իրավական ակտերը, ԱՃԹՆ-ի փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Օտարալեզու օգտվողների համար կայքի կարևոր տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

Կայքում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 11 նորություն[1] ԱՃԹՆ-ի տեղական և միջազգային գործընթացների, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ, դրանցից կարևորները հրապարակվել են նաև անգլերեն լեզվով: Շարունակաբար թարմացվել են Facebook[2], YouTube[3] և Twitter[4] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի լուսաբանման և հանրայնացման համար կարևոր նշանակություն է ունեցել 2022թ. հունիս ամսին Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում մուլտիմեդիայի տպավորիչ պատկերաշարով ներկայացված «Հայաստանի ճանապարհը դեպի պատասխանատու հանքարդյունաբերություն» խորագրով պատմությունը[5], որով լուսաբանվում է Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) անցած ուղին և Համաշխարհային բանկի կողմից որակվում որպես «հաջողության պատմություն»:

Ներկայացված պատմության մեջ արտացոլվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի անցած ճանապարհի գլխավոր հանգրվանները՝ Նախաձեռնությանն անդամակցելու որոշումից մինչև առաջին վավերացումը, ոլորտի ֆինանսական տվյալների հրապարակումից մինչև իրական շահառուների բացահայտումը, հանքարդյունաբերության ոլորտի բոլոր շահառուների մասնակցությունն ապահովող ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի ստեղծումից մինչև ոլորտի վերաբերյալ տեղեկությունների հասանելիության հանրային ազդեցությունը:

---

[1] https://www.eiti.am/hy/Նորություններ
[2] https://www.facebook.com/EITIArmenia/
[3] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[4] https://twitter.com/EITI_Armenia
[5] https://www.worldbank.org/en/news/immersive-story/2022/06/13/armenia-s-journey-towards-responsible-mining

Հաշվետու ժամանակահատվածում իրազեկման այլ միջոցառումներ չեն իրականացվել, աշխատանքային հանդիպումները, անհրաժեշտ խորհրդատվությունը ու հաղորդակցությունը շահառուների հետ ապահովվել է կապի էլեկտրոնային միջոցներով:

ԱՃԹՆ-ի առցանց հրապարակային հաշվետվությունների պարտադիր ներկայացման ժամկետին՝ օգոստոսի 1-ին ընդառաջ մշտական խորհրդատվություն է ներկայացվել հաշվետու ընկերություններին և լիազոր մարմիններին՝ այդ հաշվետվությունների լրացման և ծագող տեխնիկական խնդիրների հետ կապված:

Հայաստանի ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման նախատեսված աշխատանքները չեն իրականացվել:

2. Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում

2.1. Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում

Միջոցառումներ 13, 17-21, 24-28

2022թ. փետրվարի 3-ին դիտարկումների և առաջարկությունների համար ԲՇԽ-ի քննարկմանն է ներկայացվել Անկախ ադմինիստրատորի (խորհրդատուի) կողմից Հայաստանի ԱՃԹՆ-ի 4-րդ ազգային զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքի, ինչպես նաև զեկույցի շրջանակի և էականության շեմերի վերաբերյալ ԲՇԽ-ի որոշումների նախագծերը: Նշված փաստաթղթերը համաձայնեցվել են նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ: Քննարկումների արդյունքում որոշվել է, որ տեխնիկական առաջադրանքը կազմվել է այնպես, որ զեկույցը պատրաստվի միանգամից երկու՝ 2020 և 2021 տարիների համար: Փաստաթղթերի նախագծերի վերջնական տարբերակները պատրաստվել են ԲՇԽ-ի կողմից հաստատման համար:

2022թ. ապրիլի 27-ին կայացել է ԲՇԽ-ի նիստը[6], որը COVID-19 համավարակից հետո առաջին առկա ռեժիմով անցկացված նիստն էր: Նիստն ընդունել է Անկախ ադմինիստրատորի (խորհրդատուի) կողմից Հայաստանի 4-րդ՝ 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքի, ինչպես նաև զեկույցի շրջանակի և էականության շեմերի վերաբերյալ ԲՇԽ-ի որոշումների նախագծերը: Նիստի ժամանակ

[6] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

հաստատվել է նաև ԱՃԹՆ-ի 2022թ. վերանայված աշխատանքային ծրագիրը: Նիստի ժամանակ քննարկված հարցերը և արտահայտված կարծիքները գրանցվել են նիստի արձանագրության մեջ, որը հրապարակվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում[7]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՃԹՆ-ի ազգային 4-րդ զեկույցը կազմվելու է երկու տարվա համար, ինչպես նաև տրվելու է տվյալների համակարգված բացայտումների SS համակարգի ստեղծման աշխատանքների մեկնարկը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին, երկրորդ և երրորդ զեկույցներում բացահայտված, ինչպես նաև ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ քննարկումների արդյունքում արձանագրված մետաղական հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների ճանապարհային քարտեզի նախագիծը ԲՇԽ-ի անդամների և աշխատանքային խմբերի հետ քննարկումը հետաձգվել է, որպեսզի դրանում ներառվեն նաև 4-րդ զեկույցի առաջարկությունները: Նորացված ճանապարհային քարտեզը քննարկվելու է 2023թ. առաջին կիսամյակում, 4-րդ ազգային զեկույցի հանրային ներկայացումից հետո՝ որոշելու համար հարցերի քննարկման և իրականացման ժամանակացույցը և արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի արդյունահանող ընկերությունների խմբակցության կազմում տեղի է ունեցել համալրում՝ կազմը 2022թ. մայիսի 13-ից համալրել է Արմեն Ստեփանյանը, որը հանդիսանում է ԶՊՄԿ ՓԲԸ--ի կայուն զարգացման գծով տնօրենը:

ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումներ տեղի չեն ունեցել, անդամների միջև անհրաժեշտ հաղորդակցությունն ու համաձայնեցման ենթակա հարցերի քննարկումները տեղի են ունեցել էլեկտրոնային կապի միջոցներով:

ԲՇԽ-ի կողմից հաստատվել և 2022թ. հունվարին հրապարակվել են ԱՃԹՆ-ի 2021թ. 1-ին կիսամյակի, 3-րդ և 4-րդ եռամսյակների ԱՃԹՆ-ի առաջընթացի հաշվետվությունները[8]: Պատրաստվել է ԱՃԹՆ-ի 2021թ. տարեկան առաջընթացի հաշվետվությունները:

Առաջին կիսամյակում շարունակվել են ծրագրի ֆիդուցիար վարչարարության հետ կապված կարգավորման աշխատանքները, որոնց շրջանակում ապրիլի 19-ին Համաշխարհային բանկի գրասենյակում կայացել է հանդիպում, որտեղ գործընկերներին

---

[7] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

[8] https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

ներկայացվել են ծրագրի համար ապրիլի 7-ին Վարչապետի աշխատակազմի կողմից վարձված գնումների մասնագետը և ֆինանսական կառավարման մասնագետը:

Ազգային քարտուղարությունը Վարչապետի աշխատակազմ է ներկայացրել դրամաշնորհային ծրագրի եռամսյակային և կիսամյակային կատարողական հաշվետվություններ:

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության 2022թ. առաջին կիսամյակի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները իրականացվել են՝ համաձայնեցնելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ու Համաշխարհային բանկի հետ՝ որպես դոնոր կազմակերպության:

ԱՃԹՆ-ի քարտուղարությունը ակտիվ մասնակցություն է ունեցել Opening Extractives ծրագրի շրջանակում 2022 թվականի մայիսի 31-ից հունիսի 2-ը Օփեն Օուներշիփ (OpenOwnership) և ԱՃԹՆ կազմակերպությունների պատասխանատուների հայաստանյան այցը[9] և աշխատանքային հանդիպումները կազմակերպելու գործում: Մասնավորապես, այցի շրջանակում Օփեն Օուներշիփի քաղաքականության գծով տնօրեն Լուիզ Ռասել-Պրիվատան, երկրի գծով համակարգող Փիթեր Լոուն, քաղաքականության գծով խորհրդատու Ալանա Մարկլը և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության երկրի գծով համակարգող Օլեսյա Նեխորոշկոն հանդիպումներ ունեցան Արդարադատության նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Ֆինանսների նախարարության, Պետական եկամուտների կոմիտեի, Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի, ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, ԷԿԵՆԳ-ի պաշտոնյաների և պատասխանատուների հետ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում ԱՃԹՆ միջազգային քարտուղարության երկրի համակարգող Օլեսյա Նեխորոշկոյի և ՏԿԵ նախարարի տեղակալ, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամ Հովհաննես Հարությունյանի հետ կայացած հանդիպմանը քննարկվեցին Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման ընթացիկ և առաջիկա միջոցառումները, այդ թվում ԱՃԹՆ-ի շրջանակում հանքարդյունաբերության ոլորտի տվյալների համակարգված բացահայտումների էլեկտրոնային ծրագրային փաթեթի ստեղծման աշխատանքները:

2022թ. առաջին կիսամյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և հեռավար քննարկումներ է ունեցել ԱՃԹՆ միջազգային քարտուղարության, տարածաշրջանային քարտուղարությունների, Օփեն Օուներշիփ կազմակերպության, Բաց

---

9 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/06/07/opening-extractives/127/

կառավարման գործընկերության, VXSoft տեխնոլոգիական ընկերության, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների, լիազոր մարմինների պատասխանատուների, ԲՇԽ-ի անդամների հետ:

Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջազգային և տեղական առկա և հեռավար միջոցառումների և քննարկումների, մասնավորապես.

1) 2022թ. հունվարի 27-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից «Հայաստանի հանքարդյունաբերության քաղաքականություն II. Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակում» ծրագրի շրջանակներում կազմակերպված շահագրգիռ կողմերի հետ քննարկմանը,
2) 2022թ. փետրվարի 8-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ազգային համակարգողների մասնակցությամբ անցկացված հեռավար «ԱՃԹՆ-ն իրականացվող Եվրասիական երկրների խորհրդակցությանը»,
3) 2022թ. փետրվարի 21-23-ին ԱՃԹՆ-ի և Ասիական զարգացման բանկի հետ համատեղ անցկացվող «Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում իրական շահառուների թափանցիկության զարգացման» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին[10],
4) մարտի 4-ին Լոռու մարզի Շնող համայնքում և մարտի 18-ին Սյունիքի մարզպետարանի դահլիճում տեղի են ունենեցել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության շուրջ քննարկումներ, որոնց մասնակցության նպատակով ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը տեղեկացրել է համապատասխան համայնքների ներկայացուցիչներին,
5) 2022թ. մարտի 11-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում հանքարդյունաբերության ռազմավարության մշակման շրջանակում Գրանթ Թորնթոն ընկերության կողմից անցկացվող ֆոկուս-խմբերի հետ քննարկմանը,
6) 2022թ. մարտի 23-ին ԱՃԹՆ-ի միջազգային թիմի կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար անցկացված ընդերքօգտագործման պայմանագրերի թափանցիկությանը նվիրված աշխատաժողովին,
7) 2022թ. ապրիլի 20-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից անցկացված «ԱՃԹՆ-ի ստանդարտի լեզվի կատարելագործման» թեմայով անցկացվող առցանց

[10] https://eiti.org/events/advancing-beneficial-ownership-transparency-asia-and-pacific-region

քննարկմանը: Ապրիլի 22-ին կազմակերպիչներին է ներկայացվել հայկական կողմի առաջարկությունները առաջարկված ձևաչափով[11]:

8) 2022թ. մայիսի 18-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ասիական թիմի կողմից անցկացված «Պայմանագրերի թափանցիկություն. ինչպես է քաղաքացիական հասարակությունը օգտագործում արտահանող ընկերությունների տվյալները» թեմայով աշխատաժողովին[12],
9) 2022թ. հունիսի 10-ին ԱՃԹՆ-ի խորհրդի ԱՃԹՆ-ի անդամների արտահերթ առցանց հանդիպմանը[13],
10) 2022թ. հունիսի 13-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից անցկացված «ԱՃԹՆ-ի անկախ գնահատում» առցանց հարցախույզին[14],
11) 2022թ. հունիսի 15-ի կայացած ԱՃԹՆ կիրառող երկրների խմբակցությունների առցանց հանդիպմանը[15],
12) 2022թ. հունիսի 16-ին կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 53-րդ նիստին,
13) 2022թ. հունիսի 28-ին Երևանում Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի, CEE Bnkwatch Network, Civil Society Institute կազմակերպությունների և Էկոլուր ՀԿ-ի կողմից կազմակերպված «Ամուլսար. արձանագրված մարդու իրավունքների խախտումներ և բնապահպանական անտեսումներ ոսկու որոնումների ժամանակ» թեմայով կազմված հաշվետվության քննարկմանը,
14) 2022թ. հունիսի 29-ին Երևանում ՏԿԵ նախարարության կողմից կազմակերպված « Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության » փաստաթղթի վերջնական նախագծի ներկայացմանը,
15) 2022թ. հունիսի 31-ին Երևանում Օփեն Օուներշիփ (OpenOwnership) կազմակերպության կողմից կազմակերպված «Տվյալների ստուգման համակարգերի զարգացման» թեմայով աշխատաժողովին:

2.2. ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում

Միջոցառում 34

2022թ. փետրվարի 3-ին դիտարկումների և առաջարկությունների համար ԲՇԽ-ի քննարկմանն է ներկայացվել Անկախ ադմինիստրատորի (խորհրդատուի) կողմից

[11] https://eiti.org/sites/default/files/2022-04/Consultation%20on%20the%20scope%20of%20refinements%20to%20the%20EITI%20Standard.pdf
[12] https://eiti.org/events/peer-learning-how-civil-society-making-use-data-extractive-companies
[13] https://eiti.org/events/extraordinary-eiti-members-meeting
[14] https://voconiq.syd1.qualtrics.com/jfe/form/SV_2gUmUxR3fvp7LvM?Q_Language=EN&SRC=SE
[15] https://eiti.org/events/implementing-countries-constituency-meeting

Հայաստանի 4-րդ՝ 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքի, ինչպես նաև զեկույցի շրջանակի և էականության շեմերի վերաբերյալ ԲՇԽ-ի որոշումների նախագծերը: Այդ փաստաթղթերը կազմվել են՝ հաշվի առնելով ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի կողմից առաջ քաշվող «ճկուն հաշվետվողականության» որոշակի տարրեր: Բացի այդ, որոշվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի չորրորդ ազգային զեկույցով «ծածկել» միանգամից երկու տարի՝ 2020-ը և 2021-ը: Նշված նախագծերը համաձայնեցվել են նաև ԱՃԹՆ միջազգային քարտուղարության հետ: 2022թ. ապրիլի 27-ին փոխվարչապետ, ԲՇԽ-ի նախագահ Համբարձում Մաթևոսյանի նախագահությամբ կայացած ԲՇԽ-ի նիստում[16] հաստատվել են Անկախ ադմինիստրատորի/ (խորհրդատուի) կողմից Հայաստանի 4-րդ՝ 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքը, ինչպես նաև զեկույցի շրջանակի և էականության շեմերի վերաբերյալ ԲՇԽ-ի որոշումների նախագծերը:

Համաձայն ԲՇԽ-ի ընդունած որոշման՝ մայիսի 20-ին պետական գնումների պաշտոնական կայքում տեղադրվել է Անկախ ադմինիստրատորի ընտրության համար մրցութային հայտարարությունը: Միաժամանակ, դիմող ընկերությունների հայտերը գնահատելու համար ԲՇԽ-ի խմբակցությունները ներկայացրել են իրենց թեկնածուներին՝ մրցութային հանձնաժողովը կազմավորելու համար: Ներկայացված առաջարկությունների հիման վրա Վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից հունիսի 3-ին տրվել է հրաման՝ մրցութային հանձնաժողովի կազմի մասին: Մրցութային հանձնաժողովը ուսումնասիրել է Անկախ ադմինիստրատորի ընտրության համար ներկայացված հայտերը և հունիսի 29-ին կազմել գնահատման ամփոփ հաշվետվությունը, ըստ որի՝ Էրնսթ էնդ Յանգ ընկերությունը հավաքել է ամենաբարձր միավորները: Ըստ հաշվետվության արդյունքների՝ գնահատող հանձնաժողովը որոշել է նշված ընկերությանն առաջարկել տրամադրել համապատասխան տեխնիկական և ֆինանսական առաջարկը: Ընկերության հետ բանկացությունների դրական ավարտից հետո որոշվել է Էրնսթ էնդ Յանգ ընկերության հետ կնքել ԱՃԹՆ-ի տարեկան զեկույցի կազմման խորհրդատվական ծառայությունները մատուցելու պայմանագիր:

2.3. Իրական շահառուների բացահայտման առցանց հանրային ռեգիստրի գործարկում, իրական շահառուների մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրային վերահսկողության հնարավորությունների աճ

Միջոցառումներ 45-46

[16] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

ԻՇ հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգում[17] մինչև 2022թ. փոտրվարի 20-ը ԻՇ հայտարարագրեր ներկայացնելու/թարմացնելու պարտավորություն ունեցող ընկերություններին ազգային քարտուղարության և Պետական ռեգիստրի պատասխանատուների կողմից տրամադրվել է խորհրդատվություն:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից ուսումնասիրվել է վերը նշված համակարգ մուտքագրված ԻՇ հայտարարագրերի լրացման որակը, որի արդյունքներով կազմվել է տեղեկանք 18.03.2022թ. դրությամբ արձանագրված թերությունների վերաբերյալ: Տեղեկանքը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է ՏԿԵՆ և Պետական ռեգիստր հետագա ընթացք տալու համար:

Իրական շահառուների բացահայտման 2.5-րդ պահանջի վավերացման երկրորդ փուլին նախապատրաստվելու համար, ըստ որի Հայաստանից պահանջվում է 2022թ. հունվարից սկսած բացահայտել նաև արդյունահանման թույլտվություն ստացած կամ դրա համար դիմած բոլոր ընկերությունների, այդ թվում՝ փակ բաժնետիրական ընկերությունների իրավական սեփականատերերին (մասնակիցներին), ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից պատրաստվել է տեղեկանք, որը քննարկվել է ապրիլի 27-ին կայացած ԲՇԽ-ի նիստին: Քննարկման արդյունքներով ԲՇԽ-ի նախագահը հանձնարարել է[18] Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և Արդարադատության նախարարությանը՝ շարունակել իրավական շահառուների տվյալների հասանելիության կարգավորման հարցի քննարկումները շահագրգիռ գործընկեր պետական կառույցների հետ՝ հասցնելով դրանք մինչև դետալների մակարդակի, որից հետո ներկայացնել առաջարկվող լուծումը:

2022թ. մայիսի 31-ից հունիսի 2-ը աշխատանքային այցով[19] Հայաստանում են գտնվել միջազգային Օփեն Օուներշիփ (OpenOwnership) և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն (ԱՃԹՆ, EITI) կազմակերպությունների պատասխանատուներ՝ Օփեն Օուներշիփի քաղաքականության գծով տնօրեն Լուիզ Ռասել-Պրիվատան, երկրի գծով համակարգող Փիթեր Լոուն, քաղաքականության գծով խորհրդատու Ալանա Մարկլը և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության երկրի գծով համակարգող Օլեսյա Նեխորոշկոն:

Հյուրերը հանդիպումներ են ունեցել Արդարադատության նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության,

[17] https://bo.e-register.am/am/auth

[18] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

[19] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/06/07/opening-extractives/127/

Ֆինանսների նախարարության, Պետական եկամուտների կոմիտեի, Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի, ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, ԷԿԵՆԳ-ի պաշտոնյաների և պատասխանատուների հետ:

Այցի նպատակը OpenOwnership և EITI կազմակերպությունների համատեղ Opening Extractives (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության ապահովում) ծրագրի մեկնարկն էր, ինչպես նաև լիազոր պետական մարմիններում խորհրդատվության, տեխնիկական և իրավական աջակցության կարիքները վեր հանելու և աջակցություն տրամադրելու եղանակների ու գործող համակարգերի հետագա կատարելագործման հնարավորությունների վերաբերյալ աշխատանքային հանդիպումների անցկացումը: Հանդիպումների ընթացքում հյուրերը ներկայացրել են այս ոլորտի լավագույն միջազգային փորձը և քննարկել են այդ փորձի Հայաստանում կիրառելու հնարավորությունները:

Այցի օրակարգի կարևոր բաղադրիչն է հանդիսացել հունիսի 31-ին Երևանի Իբիս Կենտրոն հյուրանոցի կոնֆերանս սրահում անցկացված աշխատաժողովը[20]՝ «Տվյալների ստուգման համակարգերի զարգացման» թեմայով, որին ներկա են եղել պետական լիազոր մարմինների մոտ 30 պատասխանատու աշխատակից: Աշխատաժողովը, որը որակվեց որպես Opening Extractives ծրագրի հայաստանյան մեկնարկ, հավաքել էր այն բոլոր անձանց/կողմերին, որոնք շահագրգռված են կամ պոտենցիալ դերակատարություն ունեն Հայաստանի իրական շահառուների տվյալների որակի հետագա կատարելագործման, ճշգրտության և հուսալիության գործում: Մասնակիցները և միջազգային խորհրդատուները քննարկել են, թե ինչ է արել մինչ օրս Հայաստանը տվյալների ճշգրտման ուղղությամբ և ինչպես կարող է Հայաստանում օգտագործվել այս ոլորտի միջազգային լավագույն փորձը:

Աշխատաժողովի բացմանը մասնակիցներին ողջունել են Օփեն Օուներշիփ կազմակերպության քաղաքականության գծով տնօրեն Լուիզ Ռասել-Պրիվատան և Opening Extractives ծրագրի հայաստանյան համակարգող Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանը:

3. ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում

Միջոցառումներ 61-66

---

20 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/06/07/opening-extractives-in-armenia/126/

Վերը նշվածներից բացի 2022թ. առաջին կիսամյակում ԲՇԽ-ի և այլ շահառուների կարողությունների հզորացման այլ միջոցառումներ տեղի չեն ունեցել:

Ապրիլի 27-ին կայացած ԲՇԽ-ի նիստում ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարությունը տեղեկացրել է, որ մեկնարկում են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակում հանքարդյունաբերության ոլորտում հրապարակային տվյալների համակարգված բացահայտման էլեկտրոնային համակարգի ստեղծման աշխատանքները: Համակարգը ստեղծվելու է Համաշխարհային բանկի կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմին տրամադրված «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին. Լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ և աշխատանքները ընթանալու են մինչև դրամաշնորհային ծրագրի ժամկետի ավարտը՝ 2024թ. 1-ին եռամսյակը: ԱՃԹՆ-ի մի շարք առաջատար երկրներ ամենամյա ազգային զեկույցների հրապարակումից անցում են կատարում դեպի տվյալների համակարգված բացահայտման ռեժիմին, որը ենթադրում է առավել թարմ տեղեկատվության ինքնաշխատ հրապարակման համակարգի ներդրում՝ տվյալները տիրապետող մարմինների էլեկտրոնային համակարգերի միջոցով: Սա թույլ է տալիս ԱՃԹՆ-ի զեկույցներն ուղղորդել ավելի շատ ոլորտի բովանդակային խնդիրների ուսումնասիրությանը և ԱՃԹՆ-ի օգտակարության մեծացմանը: Առաջարկվել է[21] ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը կհամակարգի աշխատանքների իրականացումը: Խումբն առաջարկվել է կազմել լիազոր պետական մարմինների տվյալներ տիրապետող պատասխանատուների, ինչպես նաև պետական տեղեկատվական համակարգերի թվայնացման համար պատասխանատու մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս ուղղությամբ առաջին առաջադրանքը տվյալների համակարգված բացահայտումների SS համակարգի տեխնիկական առաջադրանքի կազմումն է, որից հետո կսկսվեն SS համակարգի ստեղծման աշխատանքները:

ԲՇԽ-ի նախագահ Համբարձում Մաթևոսյանը կարևորել է տարբեր ծրագրերի շրջանակում պետական մարմինների SS համակարգերի թվայնացման աշխատանքներում նույնատիպ աշխատանքների կրկնակի իրականացման բացառումը, նշելով, որ դրա համար կարևոր է նաև ԷԿԵՆԳ-ի հետ համագործակցությունը և նրանց կողմից խորհրդատվության տրամադրումը: Նա ընգծել է, որ դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ իրականացվելիք աշխատանքները չպետք է դանդաղեն՝ պայմանավորված պետական համակարգի ամբողջ թվայնացման գործընթացով, որի համար անհրաժեշտ է համագործակցել Հայաստանի թվայնացման խորհրդի հետ:

[21] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

4. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում

Միջոցառումներ 68-70

2022թ. առաջին կիսամյակում ԲՇԽ-ի անդամները և ազգային քարտուղարության ներկայացուցիչները շարունակել են ակտիվորեն մասնակցել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվերով Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերության կողմից Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ իրականացվող Հայաստանի հանքարդյունաբերության ռազմավարության փաստաթղթի վերջնական նախագծի քննարկումներին: Պատասխանատու հանքրդյունաբերության գործելաոճի ներդման իրենց մոտեցումները՝ հանքարդյունաբերության հետագա զարգացման այլ հարցերի վերաբերյալ դիտարկումների հետ միասին ներկայացվել են նախարարության և ընկերության կողմից կազմակերպված հանդիպում-քննարկումներին, ինչպես նաև տրամադրվել են գրավոր եղանակով:

Աշխատանքային ծրագրի այս բաժնում նախատեսված այլ աշխատանքներ առաջին կիսամյակում չեն կատարվել:

Հաշվետու ժամանակահատվածում ընդունված մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտերը

1. 2022թ. մայիսի 25-ին «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-143-Ն օրենքը[22]:
2. 2022թ. հունիսի 15-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-149-Ն օրենքը[23]:
3. 2022թ. հունվարի 5-ն ընդունվել է ՀՀ կառավարության «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» թիվ 18-Ա որոշումը[24], որը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Պետական գույքի կառավարման կոմիտեին վերապահելու, Հայաստանի Հանրապետության

[22] https://www.arlis.am/documentview.aspx?docid=164453

[23] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164753

[24] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159400

կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի N 1613-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 395-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N 18-Ա և 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1338-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2022թ. դեկտեմբերի 22-ի N 2021-Ա որոշմամբ[25]

4. 2022թ. մարտի 24-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Որպես նվիրատվություն բաժնետոմսեր ընդունելու մասին» N 395-Ա որոշումը[26]

5. 2022թ. մարտի 4-ին ընդունվել է ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-52-Ն օրենքը [27]

6. 2022թ. մարտի 4-ին ընդունվել է ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կաարելու մասին» ՀՕ-53-Ն օրենքը[28]

[25] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172052

[26] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172072

[27] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160940

[28] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160941